

ուսուցչից, հայազգի Մելինէից խորհրդաւոր բաներ էր լսել, օրինակ՝ մի գորգի մասին, «Հին հայկական գորգ մըն է ... Էրզրում-Ղարս-Վանի շրջանը հիւսուած պէտք է ըլլայ: Ասոնց յաջորդները չկան այլեւս: Ասոնք հիւսելու Հայ չմնաց այլեւս...»: Մելինէն նրա մէջ աստիճանաբար ներարկել էր այն մղումը, որ ի վերջոյ նրա բացառիկ աշխատութեան ծնունդ պիտի տար:

Իր պրպտումների ու փնտռտուքի դժուարին ճանապարհին, Եալչընը ծանօթացաւ 1915-ի դէպքերին եւ դրանց բացարձակ ուրացմանը: Ականատես եղաւ շարունակուող խտրականութեանն ու հալածանքին, որոնք կատարոււմ էին իսլամացած հայերի դէմ անգամ: Նա եղաւ առաջին թուրքը, որ հետաքրքրութիւն ցուցաբերեց եւ այսքան մանրամասնութեամբ գրի առաւ նրանց արգիլուած ու մոռացութեան դատապարտուած պատմութիւնը: Նրա աչքերի առջեւ իրականութիւնը քօղագերծոււմ էր քայլ առ քայլ: Ու իր գտած հայ վերապրողի՝ Գրիգոր Ձէյհանի հետ ինքն էլ էր մտորում. «Փոքր Ասիոյ մէջ քանի՞ եկեղեցի մնաց: Չեմ գիտեր: Եթէ Հայը, Յոյնը կը սպաննես, իրենց եկեղեցիները ինչո՞ւ կը քանդես: ...“Փոքր Ասիոյ մէջ Հայ չկայ” ըսելով “Փոքր Ասիոյ մէջ արդէն Հայ չկար” ըսել կ’ուզէ արդե՞օք: Արեւը կրնա՞ս ցեխով պատել: Հայ չկայ ըսելով կրնա՞ս Հայ պատմութիւնը, գործուած յանցանքը մէջտեղէն վերցնել»: Բայց թուրք իշխանութիւնները գիտէին մշակութային կոթողների ուժը, դրանք արմատաւորում էին մի ամբողջ ժողովրդի ինքնութիւնը եւ ապահովում այդ ինքնութեան փոխանցումը ապագային: Դրանք պէտք է վերացուէին: Բոսնիայի ջարդերից փրկուած մի կին իր ազգի մշակութային մէկ կոթողի աւերակների վրայ կանգնած ասել էր, «մի մեռած կին, մէկս